

Տրամադրանքներ

ՕՐԱԳԻՐ

Գաղափարական Գաղափարական և Գաղափարական

ԿՈՍՏԱՆԿՆԻ ՊՈԼԻՏԻԿԱ

26 Մարտ :

Մենք լուր մը չառինք Վոստոկայէն քանի որ այն քաղաքի խորհուրդին յանձնարարեցաւ պատասխան տալ Վէհմէտ Վելի վաշային խնդրոյն՝ Վորին վեհապետութեան խորհուրդին ժառանգութեանը համար տրված խաղաղ Երկրի մէջ քանի յողում չեն ընդունուի վրայոք : Բայց հասարակապէս անանկ կը կարծուի թէ շատ չեք թար կը լրմնայ այս գործը , ու քանի մը օրէն ետքը՝ անշուշտ վերոյիշեալ խորհրդոյն ինչ որոշմունք ընելը կիմացվի հոս . նաև շատ պատճառներ ալ կան , որոնք կը հաստատեն թէ ամեն բան կարգի կը դրնէ այն պատասխանը , ու բոլորովին կը վերջացնէ եզրապատկան վէճը : Ասոյք թէպէտ անհիմն չէ , բայց ալ աւելի անհամբերութեան պատճառ մըն է , որով կը սպասէ հասարակութիւնը ժամ առաջ տեղեակ ըլլալ Վոստոկայու խորհրդոյն որոշմունքին :

Օսմանեան տէրութեան նոր պաշտօնատարները լսելով որ քանի մը չարամիտ մարդիք անտեղի զբոյցներ հրատարակել են հասարակութեան մէջ , իբր թէ կառավարութիւնը մտք ունեցած ըլլայ նախկին կարգադրութիւնները բանեցնել . ուստի նոր բարեկարգութեանը ծանօտանալի տարիներ հաստատութեանը ու հասարակաց ազատութեանը

համար՝ յայտարար զիր մը խրկեցին Բարձրագոյն Վրանը բարեխնամ տէրութեանց յարգի դեսպաններուն , որով կը ծանուցանեն թէ Վեհապետ Վրբային միտքը ամենևին բան մը փոխել չէ , մանաւանդ թէ օր առօր վրայ ջանք կընէ օգտակար բարեկարգութիւնները առաջ տանելու : Վերջապէս նոր պաշտօնատարները ևս իրենց կողմանէ , նոյն բարեկարգութեանը ընդունին , ու անոր հաստատութեանը սրտանց հոգ կը տանին :

Մեծ ուրախութեան պատճառ եղաւ այս բանը , ո՛չ միայն եւրոպացոց , այլ և բոլոր հասարակութեանը , որոնք արդէն արդէ հասկըցեր են բարեկարգութեան կանոններէն առաջ եկած օգտակար բարիքը :

Երեկ չէ առջի օր կէս օրէն ետքը՝ Վորին Վեհապետութիւնը Վեստոկայէ կողմէ եռայարկ նաւը գնաց ուր որ ծովախալը՝ Վ . Վ սե . Թասիք փաշան , հարկաւոր եղած պատրաստութիւնները ըրած էր , արժանաւոր յարգութեամբ ընդունելու օգոստոսաբաւ այցելուն և իր հետը եղող տէրութեան պաշտօնատարները և արքունական պալատին երեկ լինելը :

— Անցած ուրբաթ օր Յունաց Պատրիարքը՝ Բիֆաթ փաշային նոր պաշտօնը շնորհաւորելու դրնաց . Վ . Վ սե . շատ մարդասիրութիւն ցըցուց աւարտ :

Հետեւեալ օրը՝ շայոց ազգին Պատրիարքը ևս

նոյն պարտաւորութիւնը կատարելու համար Վ . Վ սե . քովը գնաց , որ շատ սիրով ու մեծարանօք ընդունեց զանի :

ՕՐԱԳԻՐ

4 Մարտ :

Վրէժներէն կը գըրեն « Անցածները ըհտիֆի զօրքերէն Մուստաֆա անուամբ մէկը իր հրացանը (թիւֆէնկը) , հարուածին ըսված հայ ղինագործի (սիլահճի) մը տարաւ որ շինէ , տասներկու զուռուզ գին , կտրելով շինողէքի համար : Վանի մը օրէն ետքը յիշեալ Մուստաֆան կերթայ իր հրացանը առնելու , բայց տասը զուռուզ կողմէ հատուցանելու . ղինագործը կը պատասխանէ թէ , տասուերկու զուռուզ պիտի տաս ինչպէս որ դաշինք ըրած ենք : Ասոր վրայ յիշեալ ըհտիֆը կը բարկանայ ու կըսկըսի չարաչար նախատել ղ ղինագործը . բայց խանութի ղրացիները հասնելով կը համոզեն Մուստաֆային իրաւունք չունենալ իրեն , ուստի պիտք է որ 12 զուռուզ հատուցանես կըսեն . անալ խիտ բարի ըսելով կը ձգէ կերթայ : Վէկ ժամէն ետքը կը լինի կը դառնայ ու իր հրացանը ղինագործին խանութին յափշտակելով՝ անոր կողմով յանկարծ անանկ սաստիկ ուժով մը գըլտուն կը զարնէ , որ խեղճ արհեստաւորին ըղեղը դուրս կը թափի ու վար կիյնայ . քանի մը հոգի շուտով իր տունը կը տանին աս ղ ըհտիֆ մարդը որ գիշեր մը ապրելով առաւ

սաստիկ ջարդ մը տրվաւ տեղացիներուն մեծ բանակին , ու տիրեց Պենկալայի , Պահարու և Օրիքսայի :

Մ . Հասթէնկի կառավարութիւնը ևս որ Հնդկաստանի ընդհանուր կառավարին էր , եր շարունակ ծեծ ընելով ու դաշինքներու համար բանեցուցած հնարքներով շատ երեւելի եղաւ : Հայտեր Վելի ու Վաղդիոյ դէմ պատերազմին համար գացած ծախքը՝ վերստին նեղութեան մէջ ձգեց ընկերութիւնը , անանկ որ՝ ստիպվեցաւ փոխ ուզել տէրութեանն 9000,000 լիբրէ սթէրլին :

Աւստի տեսնելով որ ընկերութեան օրէնքը բոլորովին նոր բարեկարգութիւններու հարկաւորութիւն ունի , Վրբայ պաշտօնատարը առաջարկեց որ Հնդկաստանի գործոց կառավարութիւնը եօթը գործակալի յանձնեն , որոնք որ Վառլամէնթը ընտրելու ըլլայ : (Այց անուանի Վիդը իշխանութեան հասնելով՝ օրէնք մը գըրաւ Հնդկաստանի գործքերը կարգի դրնելու համար , որու հետ սահմանվեցաւ նաև « Վրձանագրոյ պաշտօնատարութիւնը Հնդկաստանի գործքերուն » : Այս ժողովոյն անդամները վեց հոգի էին տէրութեան գործակալներէն , ու անոնց յանձնարված էր վերակացութիւնը , արձանագրութիւնը , քաղաքական ու ղինւորական կառավարութեան վերա-

բերեալ գործքերը՝ արեւելեան Հնդկաստանի ընկերութեանը ձեռքը եղած երկիրներուն մէջ . վերստին շնորհելով անոր լիակատար ու բացարձակ իշխանութիւն առաւարական գործոց՝ համար :

Այս արձանագրոյ պաշտօնին հաստատութիւնը , ընկերութեան եկամտներուն օգուտ մը շինելէն՝ ի զատ՝ ալ աւելի շատցան անոր պարտքերը : Հասարակաց խորհրդարանին տրված հաշիւէն , 12 մարտի 1799 , յայտնի եղաւ որ 1,319,000 լիբրէ սթէրլին պակսեր է :

Վորնվալիս Վարքէզին կառավարութեան ժամանակը Վիպպու Սայիպի երկիրներուն կէսը կողպատելով յափշտակեցին . ու Վալէսլը Վարքէզին կառավարութեան ատենը 1797 ին սկսաւ իշխել՝ մինչև 1806 , Հնդկաստանու մէջ անգղիացոց ստացուածքները խիտ շատ է վերցան Սէրէնկարագանի տէրութեան ու Վիպպու Սայիպի երկիրներուն տիրելով . ինչպէս և ուրիշ հարկաւոր տեղեր ու Տը լի քաղաքն ալ առնելով , որ Վոզոլի նախկին մայրաքաղաքն էր :

Ընկերութեանը երկիրներուն եկամտները 1797 ին ու թ միլիոն լիբրէ սթէրլին էր . 1805 ին մինչև տասներհինգ միլիոնի հասան . բայց կառավարութեան ծախքը ու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(շարունակութիւն և վերջ) :

Այս երկու ընկերութիւնը սաստիկ կը թու մը ընելէն ետքը՝ տեսնելով որ այս բանը իրենց կործանմանը պատճառ պիտի ըլլայ , խոհեմութիւնը ձեռք առին ու յամին 1702 , միարանելով մէկմէկու հետ մէկ ընկերութիւն եղան :

Արբոր այս պոյմանագրութիւնը կը լար Արտուստու մէջ , 1698 ին՝ Վաղարշայի ալ տիրեց ընկերութիւնը , ու մէկ ահարկու բերդ մը շինեց հոն : (Յետոյ՝ յամին 1715 , Տը լի թագաւորէն իշխանութիւն առաւ Վաղարշայի շրջոյն եղած 37 գեղերուն վրայ ալ իշխելու :

Անտոնները ընկերութիւնը շարունակ պատերազմեցաւ պարագելով՝ քիչ մնաց որ կորսնցունէ իր համարձակները : Վիլիմ անուն երեւելի հազարապետը՝ Վաղարշական գործութիւնը տկարացնելէն ետքը Մատրասու սահմաններուն մէջ , 1300 երոպացի ու 1400 հնդիկ ղինւորներով

օտու՛ն կը մնանի : Հանգուցեալին յուսահատեալ ծնողքները դառն գանգաւ կընեն մարդասպանին դէմ քաղաքին ժողովոյն (շուրային) որ աւանց քննութեան խնդրին կը վճռէ թէ՛ « տաճիկ մը մահապարտ սեպ վերու համար , պէտք է որ երկու բայտ սպաննած ըլլայ » :

— Նիյոնի սանճախի մէջ Պօր ըսված քաղաքը 12 տարւան խելագար տղայ մը անցածները տաճիկը ցուցեր են ու քաղաքացիները ձիու վրայ հեծցու նետով զանկէա բոլոր շուկաները ու փողոցները պտրտուցեր ու հանդիպած քրիստոնեաները յապր տաւորեր են բռնութեամբ որ յիշեալ տղուն ոտքը համբուրեն : Պարկեշտ հայ քաղաքացի մ' ալ էր տանը դուռը գտնուելով կը հրաւիրեն զնա որ ինքն ալ անոր ոտքը սպանէ . Բայց ասիկա չուզելով՝ բռնի կը քաշեն ու կը տանին . խեղճ կինը դուրս կըլլայ որ էր երկանը պաշտպանութիւն ընէ . բայց աս խռովարար մարդիկը՝ կնիկին գլուխը եղած ու կնիկները յափշտակելով՝ նախատանօք կը վրձնտեն զանկէա : Կ' զխալուածը քաղաքին կառավարիչին մարդիկներուն ներկայութեանը եղեր է . որոնք ամենեւին բան մը չեն ըսեր :

Նմանապէս Բիւր օղու ըսված երեւել տաճիկին մէկը , որ նախկին զատին է եղեր Պօր Բաղաքին , 8-9 տարեկան որբ հայ աղջիկ մը էր տունը առեր է որ պահէ իբր մարդասիրութեան համար , հիմայ բռնաբար տաճիկըցունել կուզէ զանկէա . թէպէտ և աս խեղճ աղջիկը չափահաս չէ , բայց և այնպէս կը հաստատեն թէ չուզէր հաւատքը փոխել . սակայն Բնջ օղուտ որ յիշեալ Բիւր օղուն էր տունը իբր բանտի մը մէջ պահէր է զանկէա ու չի թողուր ամենեւին որ զանկէն դուրս ելլայ :

Արշահիւրի շուրային բրած դատատանը ու Պօր քաղաքին տաճիկներուն և կառավարիչին անվայել լուս ու խնդի վարմունքը , Խաղաղի Երեմիայի արդար կանոններուն յայտնապէս դէմ ըլլալով՝ չենք երկբայիբ որ բարձրագոյն Պրան մարդասէր կառավարութեան արհեստը հասնելունպէս , յիշեալ ան ըզ զոյճ անձինքները խնդրին կը պատժուին հրու պարակաւ , որ ուրիշ քաղաքները եղած ժողովներ

րուն ալ բարի օրինակ ըլլալով , չի յանդգնին ասիկէ ետքը բարեգութ ինքնակալին հրատարակած նոր բարեկարգութեանց դէմ անիրաւ գործքեր ընէլ : — Ար փութանք հասարակութեան սիրտը հանգչեցունել , անցած շաբթուան ժամտախտի երկիւղին վրայօք , որ կըսէին թէ Մէնիմէնի մօտ գեղիմը մէջ երկու իրիք զխալած եղերէ . որովհետեւ տեղույս քարանձինս յի կառավարութեանը ըրած հարկաւոր քննութիւններէն ստուգուեցաւ որ ժամտախտի զխալած ամենեւին պատահած չէ այն կողմերը :

ԱՆԳՂԻՒ

Լճաւուտ , 8 մարտ : Բնդղայի տեղութեան երկու օրագրութիւնը՝ Մօրնիկ Բրոնիքը ու Արաբ , կը հաստատեն թէ՛ Մէհմետ Եւն փաշային խրկելով իր Խաղաղի Երեմիայի հետ , բարեկամական գեր մ' ալ կար . որով (Օսմանեան թաղաւորը արտանութիւն կը շնորհէ թէ՛ անոր և թէ՛ Խաղաղի փաշային , թէ որ կենդանի մնալու ըլլայ իր հօրը մեռնելէն ետքը , Լզիլպտոսի իշխանութիւնը ընդունելու համար Կոստանդնուպօլիս չերթայ : Ուրեմն յայտնի է որ՝ Խաղաղի փաշային յաջորդութիւնը , թէ և անուղղակի՝ արդէն հաստատուած է :

Նմանապէս ամենեւին չենք երկբայիբ կըսէ , որ (Օսմանեան թաղաւորին միտքը) (որ ինքը միայն անուանելու գիտաւորութիւն ունի կառավարիչը՝ երբոր փոքր ըլլայ յաջորդը , ու կառավարելու բաւականութիւն չունենայ) յայտնի ըլլալով փաշային , ալ կասկած մը չի մնար :

Լզիլպտոսի փաշան արդէն ընդունած է իր Արաբային Խաղաղի Երեմիայի միայն թէ քանի մը յոգւածներուն համար յատուկ գիր գրած է ու կը խնդրէ որ չափաւորեն զանոնք . ուստի շատ հաւանական կը կարծենք որ այս խնդիրքը կը կատարվի աւանց ընդգրկումութեան : Բնջիմ բան մըն է անանկ կարծիք ընէլ , թէ տակէց գժտութիւն կը ծագի Աւրոսայի տեղութեանց մէջ . ու այս բանին հաճեցուցիչ պատասխանը՝ ժամանակը միայն կընայ տալ , և ինչպէս կը յուսանք՝ շատ քիչ ատենէն ետքը :

պարտքին շահը չափէ դուրս ելելնալով՝ նոյն տարին 2, 269,000 լիբր սթէրլին պակսեցաւ :

Բնկերութեանը ունեցած արտօնութեան ժամանակը ընկեր էր 1814 մարտի 1ին . ասոր համար առուտուրի ազատութիւն ուղղները ջանք ըրին որ անիրաւութեամբ գրքոված մենափաճառութիւնը (եէտի վահար) Հնդկային վաճառականութեան վերնայ : Ուստի 1814 ին՝ աղտ փաճառաշահութեան հրաման ըրաւ Բաւարմէնթը . Չինիմաչինի հետ առուտուր ընելու իշխանութիւնը միայն բնկերութեանը շնորհելով մինչև 10 ապրիլի 1831, ու Հնդկաստանու երկիրները կառավարելու : Յիշեալ ազատութեան պայմանները ասոնք են . մասնաւոր փաճառականները չի կրնան աղտօրէն առուտուր ընել , բայց միակ Արիւսթա , Մատրաս ու Պոմպա քաղաքներուն և Փիլի փիլիսօի նաւահանգստին հետ . այս սուրբաւորութեան համար սահմանված (թային եղած) նաւերը՝ 350 տակաւաւապիէն պակաս չի բեռցենն . նաև Հնդկաստանի և ուրիշ նաւահանգստները կամ Չինիմաչինի մէջ բեռ չի տանին չի բերին :

Մենափաճառութեան ինչ գէշ բան ըլլալը փորձով իմացվեցաւ . ինչու որ յամին 1821, արդէն հնգապատիկ

էվելցած էր դուրս ելած փաճառքներուն չափը :

Մնաց որ այս բնկերութեան վարմունքը թէպէտ մասնաւոր փաճառականներու վնաս տրվաւ , սակայն իրեն ալ մէկ օգուտ մը չեղաւ . ինչու որ բնկերութիւն մը՝ որն որ զօրք կը պահէ ու թէյի (չայի) համբարներ ունի , արտաբոյ կարգի բան մըն է : Բաւարմէնթին տրված վճիւր 1834 ին , բնան տարիի համար՝ ևս նորոգեց իր հրովարտակը , ու սահման գրքաւ անոր առեւտրական գործքերուն : Ուստի բնկերութեան պաշտօնները չափաւորեալ են հիմնց ու միակ այն ընդարձակ երկիրներուն հարկը (վէրկին) առնելու ու զանոնք կառավարելու հոգաբարձութիւնը ունի :

Բոլոր շարժական ու անշարժ սաացուածքները որ ունէր , 1834 ապրիլի 2 ին , թագաւորին անցան , ու բնկերութիւնը միայն անոնց եկամուտները պիտի վայելէ որչափ ասան որ քըշէ իր արտօնութիւնը : Յիշեալ հրամանը բաւարմէնթին չափ զըրաւ նաև բաժանելի շահուն հարկի ին 10 1/2 , ինչպէս որ սովորութիւն կըսէր 1793 էն ՚ի վեր :

Բնկերութեան գրամաղլու իր 6 միլիոն լիբր սթէրլին է . ինչ և իցէ մարդ լիբր 10 է կին որ քաղաքէն կը լլայնէ ըլլայ (Բնկերութեան պայմանները կառավարիչն ՚ի զատ)

ԱՄԵՐԻԳԱ

Միացեալ Նահանգներ :

Այս երկրին օրագրութիւնները մանրամասնաբար պատմելով Հարիսոն զօրապետին նախադաս (փրէզիտան) ըլլալը Միացեալ Նահանգներուն , անոր գրած յայտարարութիւնն ալ կը հրատարակեն . որ թէպէտ շատ երկար է , բայց ամենեւին բան մը չի նշանակիր ամերիկայոց Անգղիայի հետ ունեցած վէճին վրայօք :

Բայց նոր նախադասին լուրթիւնը ատանկ երևելի նիւթի մը վրայ՝ իր խոհեմութեանը կուտան . որով հետեւ իր վիճակն ալ չէր ներքեր որ ազէկ տեղեկութիւն մը ունենար տեղութեանց գործքերուն . ուստի այսքան զուրկեց Միացեալ Նահանգներուն օտար սէյութեանց հետ ունեցած միաբանութեանց վրայօք :

« Ապահով ըլլան իմ հայրենակիցներս որ ձեռքէս եկածին չափ պիտի աշխատիմ , հաստատ պահելու համար մեր հիմնական ունեցած բարեկամութիւնը օտար տեղութեանց հետ , թէպէտ ըստ չեմ գիտեր թէ ինչ վիճակի մէջ են մեր գործառնութիւնները որ անոնց մէկ քանիին հետ ունենք , այսու ամենայնիւ տեսնալով թաղաւորներուն վստահութիւնը և փոխադարձ շահը որ կը միաբանեն զմեզ անոնց հետ , շատ յոյս ունիմ որ իրենց հարատակներուն ու Միացեալ Նահանգաց բնակիչներուն ևս օգտակար եղած միաբանութեանը ամենեւին արդէք մը չըլլայ ու հաստատ կը մնայ :

« Շատ ժամանակ է ՚ի վեր իմ հայրենեացս իրաւունքներուն պաշտպան ըլլալով պատերազմի դաշտերուն մէջ , կը յուսամ որ իմ քաղաքակիցներս խաղաղութիւնը հաստատ պահելու համար յըցուցած փափաղիս մէջ , բնաւ նշան մը չեն տեսնար ազգին իրաւունքները զոհելու , կամ պատիւը կորսնցնելու , իր նախկին փառացը անարժան թոյլ տուութիւն մը ընելով ,

կրնան ձեռք բերել քանի բաժին (հիստէ) ուղելու որ ըլլան : Աճառականութեան գործադիր բնկերներուն (հիստէտարներուն) թիւը՝ 1825 ին , 2000 էն առելէր :

Բնդղացուց տեղութեան տակը եղած Հնդկաստանի գաւառներուն մակերեսը՝ 553,000 քառակուսի մղոն է , 83 միլիոն ժողովուրդով . անգղացուց հարկատու ու նիւզակակից երկիրներունը՝ 550,000 քառակուսի մղոն , 40,000,000 բնակիչով : Բնդ ամենը 1, 103, 000 քառակուսի մղոն և 123 միլիոն բնակիչ , աւանց համրելու Վանգէս գետին անգլի կողմը եղած անգղացուց երկիրները , որոնք 77, 000 քառակուսի մղոն են , 300, 000 բնակիչով , ու անոնք որ այս ետքի տարիներու մէջ հարկատու եղան : Այս ընդարձակ գաւառները պաշտպանելու , ու այնչափ ժողովուրդը զսպելու համար պէտք եղած զօրքերը՝ 1830 ին՝ ամենը մէկէն 223, 466 հոգի էին , որոնցմէ 37, 376ը կըրոպացի էին . այս զօրքերուն տարեկան ծախքը՝ 9, 506, 000 լիբր սթէրլինի կը հասնէր :

(Օրագր . աւստրիական)
—, (Ի . Ս)

ԻՆՏԵՂԻՒՆ

Ի խորհուրդ 1 Մարտ :

Բամպակ : Աս շաբթըվան աւջի օրերը բաւական առուտուր եղաւ ըստ Բնդդիայի և Կիսայեալ Կա... Զանգաց մէջի պատերազմի կասկածին պատճառովը զինեղնալ բաւականապէս բարձրցան : Բայց կարը Լմերիբայէն եկած լուրերը՝ սրատ՝ բազմի երկիւղը վերցընելով , ու Մանգեստերի , շինուու ու Չինու... մաչնի զիրերը գէշ լուրեր բերելով առևարական գործառնութեանց վրայօք , բամպակի զինեղը ոկան թուրնալ ու ապրանք ունեցողներնալ մեծ փափագ կը ցուցնին վաճառելու : Ըս շաբթըվան եղած բամպակին ծախար 36 570 պալեա է գննադան տեսակներէն ու քաղաքը մտածին թիւը 21,473 պալեա , այսինքն Լմերիբայէն , շինուուն և ուրիշ տեղերէն :

Ասորվան օրըս Լիբրիբուրին մէջ եղած բամպակը ամեն տեսակներէն 37,2630 պալեա է :

Անցած տարի աս օրս միայն 1,89,310 պալեա կար :

ԳԼԿՂԻՒՆ

Մարտիկա , 20 Մարտ :

Բամպակ : Ըս շաբթ մեծ անշարժութեան մէջ մնաց , ու Լմերիբայի տեսակներուն զինեղն ալ իջան : որովհետև Կիսայեալ Կասանդներէն եկած զիրերը հաշուութեան յայ կուտան Բնդդիայի տեսութեան հետ : Իզմիրու բամպակներէն 20 պալեա Սոպուճա վաճառվեցաւ 87 1/2 Ֆրանքի յիսուն քիլոկրամը հարուրին 2 վար իջեցուցնելով . նմանապէս 46 պալեա Բրքաղաճ 85 Ֆրանքի հարուրին 4 վար իջեցուցնելով . բայց գէշ տեսակները շատ դժուար վաճառու են , մանաւանդ վարնոց Սոպուճան . հիւմա լաղարիթը եղած Բրքաղաճի բամպակը 81 Ֆրանքի տուող կայ :

Բաղաատական ծանօթութիւն , Մարտիկայի բամպակներուն վրայօք հասարակօրէն , 1839 տարիէն մինչև 1841 , լատին սոցոց թիւով :

Կախված բամպակը , Պալեա Կանթվածը Պալեա

Table with 3 columns: Year, Quantity, Price. 1839. 12 ջի իրեք ամբլան մէջ 14 224 . Տարս 31 . 25,946 1840 " " " " 14,946 . " 13,086 1841 " " " " 17,25 . " 9445

Մետաքս : Մի և նոյն վիճակի մէջ կը գտնուի ու խիստ քիչ առուտուր եղաւ աս շաբթ . Պարսկաստանի մետաքսի զինը՝ 14 1/2—15 1/2 Ֆրանք կէս քիլոկրամը . Պրուսայինը՝ 18 Ֆրանք . մեշտուտը՝ 19 1/2 . Բնդդիանուպոլիսի ապրանքը՝ 24 Ֆրանք : Հիմնուհիւմայ 600 պալեա մետաքս կայ որոնցմէ 400 պալեան Բարբոստանէն եկաւ :

Եափախ : Միշտ անշարժութեան մէջ է . որովհետև ներքին քաղաքներէն դնոյ առնելու հրամաններ չեն իջար , ու աս պատճառի գրեթէ ամենին առուտուր չըլար . բայց և այնպէս զինեղը հաստատ կը մնան :

Գործատուներու վերաբերեալ ձէթ : Ըստ ապրանք գարուն համար միանգամայն , զինեղը ըսկրան քիչ մը իջնալ ու խիստ քիչ գործառնութիւններ եղան աս շաբթ . մէկ մասը կիրիտու ու

Միտիլի ձէթ վաճառվեցաւ պատրաստ ապրանք 153 1/2 Ֆրանք էքթոլիթրան (75 օխան) . ուրիշ քանի մը ծախք ևս եղան ապրանքը 3—4 ամբլան մէջ առանդելու պայմանաւ 150 Ֆրանքի էքթոլիթրան :

Սապոն : Բիւջառուտուր եղաւ աս շաբթ , բայց անցած շաբթըվան զինեղուն փոփոխութիւն մը չեղաւ . մանաւանդ թէ հաստատ կը մնան . 500 սունտուկի չափ կապոյտ ու գեղն սապոն ծախվեցաւ քաղաքին մէջը , 49 1/2—50 Ֆրանք յիսուն քիլոկրամը . ու 150 սունտուկ համբարանոցի մէջը 38 1/2—40 Ֆրանք : Բանի մը մաս ճերմակ սապոն ևս վաճառվեցաւ 58—59 Ֆրանք քաղաքին մէջը , ու 48—48 1/2 Ֆրանք համբարանոցի մէջ :

Իզան մորթ : Բիւջ կայ . որովհետև ամեն օր անպակաս կը վաճառվի ու գուրսերէն ալ գրեթէ ամենեւին չի գար : Ըս շաբթ 700 չոր մորթ Ռիօյի վաճառվեցաւ 85 Ֆրանք յիսուն քիլոկրամը . նմանապէս 500 հատ Պուէնու—Երբսի 80 Ֆրանք :

Անքուտ շաբար : Ընցած շաբթ բաւական առուտուր ըլլարով ու գործատուներ տէրերը իրենց հարկաւոր եղած շաբարը արդէն գնոյ առած ըլլալով , այս շաբթ գրեթէ միայն 73 վառիլ Մարթի Երբայի ապրանք վաճառվեցաւ 34 Ֆրանքի՝ հարիւրին 2 վար իջեցուցնելով :

Չտած շաբար : Բիւջ մը թուլ է . որովհետև գուրսերէն ծախու առնելու հրամաններ չեն իջար : Գլուխ շաբարը հարուրին 7 թուղթի համար վար իջեցուցնելով՝ 39—38 1/2 վաճառվեցաւ իրեք ամիս օրով :

Խարանճիլ : Բիւջ ապրանք կայ ու զինեղը օրէ օր բարձրնալու վրայ են . համբարանոցի մէջ եղած ապրանքը 140—142 Ֆրանք վաճառվեցաւ յիսուն քիլոկրամը : Բանի մը հարուր պալեա Պուրպօնի խարանճիլ ապրանքը չի հասած 145 Ֆրանքի դնոյ առին :

ԶՄԻՌՆԻՒՆ

4 Մարտ :

Առևտուրնիս Գատկի տօներուն պատճառով աս շաբթ մեծ անշարժութեան մէջ մնաց ու խիստ քիչ գործառնութիւններ եղան . անոր համար շատ ծանօթութիւններ չունինք տալու այս անգամ :

Բամպակ Եւրոպայէն եկած լուրերը աս ապրանքին վրայօք գէշ են . որովհետև Կիսայեալ Կասանդաց ու Բնդդիայի մէջ պատերազմի երկիւղը վերնալով՝ Լմերիբայի բամպակներուն զինեղը իջած էին Նոտուա և Մարտիկա : Ըս պատճառի համար հոս ալ աս ապրանքը շատ թուլցաւ . ուստի անցած շաբթըվան նշանակած զինեղը անուշով միայն են այսօր , ու նոր առուտուր չեղաւ տակաւին :

Եափախ : Խիստ քիչ ապրանք կայ ու գնոյ առնող պակաս չէ . ասորվան զինը 220—230 դուռուչ է խանթարը :

Եապատակի մորթ : Բաւական ապրանք կայ ու անշարժութեան մէջ է . տուաջին տեսակը՝ 400 դուռուչէ հարուր հատը . երկրորդ տեսակը՝ 230 :

Ղէհրի : Կուղ վի . 29—31 դուռուչ օխան ըստ տեսակին զիւրավաճառ է . քիչ ապրանք կայ :

Աֆիօն : Գինեղը սկսան քիչ մը շարժիլ Չինիլ

մաչնի Բնդդիացոց հետ հաշուութեան լուրերէն ետըր . ասորվան արժողութիւնը 86—86 1/2 դուռուչ է չէքին . քաղաքիս մէջը 150 սեփեթ ու 100 սունտուկի չափ անֆիօն կայ :

Քէօք սոյա : Կուղ վի ու խիստ քիչ ապրանք կայ մանաւանդ Պալսըրու տեսակը , որնոր 240 դուռուչ կրնայ վաճառվիլ . Կայաճըխի զինը՝ 220—230 դուռուչ է :

Տորին : Բիւջ կայ ու կուղ վի . Ուշախի տեսակը 36—37 դուռուչ քիլէն , Մանիսայինը՝ 33—34 . Սէնիմէնինը՝ 30—31 . դարին 14—14 1/2 :

Բրինձ : Մօտերս զինեղը բարձրացն . որովհետև տե Եգիպտոսէն քիչ ապրանք կուգաւ ու կոտան զնուպոլոյ համար ծախու առնող սկսաւ չէ . հիւմա մը հիւմայ Եգիպտոսի լաւ տեսակը՝ 22 1/2—23 դուռուչ կը վաճառվի . Ղէնօվայի տեսակը՝ 21—21 1/2 է :

Խասիկ : Ընցած շաբթեան մէջ է . ասորվան արժողութիւնը՝ 600—650 դուռուչ է ըստ տեսակին :

ՉԲՆԵՉԵՆ ԼՈՒՐՆԸ

Մարտիկայի օրու յանձնըված է իզմիրու թէֆտերտարութեան պաշտօնը , մօտ օրերս պիտի դայ կոտանիւնուպոլիսէն : Ըս մայրաքաղաքէն եկած մանաւորներու զիրերը շատ դուրսութիւն կուտան յիշեալ պաշտօնատարին ու շինութեանը ու յարգելի բարուցը : Աւստի անոր բարի համբաւը լսելով՝ դեռ ինքը չեկած , ամենեւին չէք երկբայի որ այս պատուաւոր անձը ամենայն արգարութեամբ և ջանքով պիտի կատարէ իրեն յանձնըված հոգաբարձութիւնը :

Ընդերիանուպոլիսէն կը գրեն անցած ամիս 20 ին . « Կորին Սեմութիւն Եազուպ փաշան առ ժամանակեայ կառավարիչը այս Սանճախին , երեկ հասաւ հոս երկու հարիւր ձիաւոր զօրքով և իրեք թիղանութով : Տեղոյս քաղաքական ու զինուորական գործակալները , նաև հաստակազաց զխաւորները՝ դեմաւորեցին Կ . Ս . ու արժանաւոր պոտուով քանդար մոցուցին :

Ընցած շաբթու անդիացոց պատերազմական շողենաւը շէքաթ կոչված Մարմարիցայէն եկաւ : Յիշեալ նաւահանգիստը գտնըված՝ անդիական մեծ նաւերը Մալթա գացեր են , ուսկից նաւահանգէսին մեծ մասը Ղիպրալթար պիտի երթայ :

ԵԳԻՊՏՈՍ

Ծանօթութիւն Եգիպտոսի նաւահանգիստին մէջ մտած ու դուրս ելած գլխաւոր ապրանքներուն վրայ 1840 ին :

Table with 2 columns: Item, Quantity. Մտած ապրանքը : Գինի սունտուկ 874 ևս վարիլ 1804 Մանիֆաթուրս պալեա 4726 Հագնելու և ուրիշ մօտայի բաներ , , . 4226 Ալլեր վառիլ 941 Թուղթ ըրգմա 18190 ևս պալեա 454 Խասիկ գէմպիլ 3762 Շաբար վառիլ 978

Table with 3 columns: Item name, Unit, and Value. Items include 'Սալամուրա', 'Ղուրջին', 'Ջուխայ', etc.

Դուրս ելած ապրանքը :

Table with 3 columns: Item name, Unit, and Value. Items include 'Բամպակ', 'Բրինձ', 'Խուրմա', etc.

ՃԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Քանի մը գլխաւոր քաջերու ու չափերու վրայօք :

Լոնտոայի :

Table with 3 columns: Item name, Unit, and Value. Items include 'Օնար', 'Փածնոր կամ լեւրը', etc.

Մարտիլայու :

Table with 3 columns: Item name, Unit, and Value. Items include 'Լիլըր', 'Քիլոկրամը', 'Լքթօլթրան', etc.

Ուստի Իզմիրու խանթարի այսրը , Կոստանդնուպոլսու այսրէն հարուրին 5 պակաս է . ստոր նման ուրիշ քաղաքներու խանթարն ալ մէկզմէկէ աւելի կամ պակաս տարբերութիւն ունին :

ՀԱՐՃՄՈՒՆՔ

Գաղղիական շոգենաւերուն ,

Լատինացոց թիւով :



Մարտիլայէն կելլայ ամեն ամսու 1 , 11 , 21

Կը հասնի՝

Table with 3 columns: Destination, Unit, and Value. Destinations include 'Լիլօնո', 'Մալթայ', 'Ալէքսանդրիա', etc.

Կոստանդնուպոլսէն կելլայ ամեն ամսու 7 , 17 , 27

Կը հասնի՝

Table with 3 columns: Destination, Unit, and Value. Destinations include 'Իզմիր ամեն ամսու', 'Սիրա', 'Աթէնք', etc.

Մարտիլա երթալու համար ,

Table with 3 columns: Destination, Unit, and Value. Destinations include 'Իզմիրէն կելլայ ամեն ամսու', 'Սիրայէն', 'Աթէնքէն', etc.

ՃԱՆՈՒՑՈՒՄ

Լոնտոա քաղաքին մէջ երևելի բժիշկներէն՝ Ալմիթ անունով քաջ վարպետին հնարած Սափարնա խիւլասէյին հապերը :

Յիշեալ կարգադրութիւնը (Թէրթիպը) , Գըրանայու Լնկիլթէուայի , Դուռինի , Շէնօլայի փապիլայի և ուրիշ երևելի տեղանց բժշկատուններէն , և արհեստական ճեմարաններէն հարցաքննութեամբ փորձըված և օգուտը ստուգութեամբ ընդունելի եղած է . անանկ որ՝ մարդու մարմնոյն մէջը արեան ապականութենէն զոյսցած բոլոր ախտերուն օգուտ կրնէ . այսինքն՝ ըսկորպութի բիծերը , թուղու պաղամ , ֆրէնկի , մայասը , և մարդու մարմնոյն վրայ պատահած լամեն տեսակ խապարճըսի պէս բոլոր աղտերը , և ճիւղը դեղ գործածվելէն առաջ եկած կերպ կերպ գեշութիւնները բոլորովին կը ջնջէ : Սափարնային մաթպուհը կը բեմնեղութիւն կուտայ ստամոքսին , ու ամեն ժամանակ չի գործածվիր . բայց աս դեղահատը (հապը) , ամեն ժամանակ և ամեն տեսակ անձինք , թէ՛ սյր և թէ՛ կին առհասարակ կրնան առնել . դեղահա-

տերուն ամեն մէջը հինկական ցորենաչափ ըլլալով ինը հատին մէջ կէս օխայ մաթպուհի զօլութիւն կայ . նաև շատ զխրութեամբ կը գործածվի՝ դեղահատի թէրթիպ ըլլալուն համար . գործածութեան չափը ու եղանակը՝ այս դեղահատի տուփերուն վրայ փաթութեամբ թղթերէն յայտնի կըլլայ :

Ուզողները կրնան դռնել , Պօլիս՝ Գալթիա մէվլախանէյին կողմը , Աինեօր Բնթօնի Գալթիա կոչված դեղափաճառին (էզաճիլին) զիւրաֆա նշան կախված խանութը :

Իզմիր՝ Ինեայի Գօմէնի անունով դեղափաճառին խանութը կը գտնուի :

Մատամ փիթաքօյին տունը որ ծովեղերն է , բժիշկ Կաղանային տան զիմացը , վարձքի պիտի տրուի . կրնայարկ (երկու խաթ) է այս տունը , չորս սենեակ մէկ խահարան (աչէվի) վերը կայ . և չորս սենեակ մէկ խահարան վարը : Երկու կերպ դաստան (Փապիլեա) հանգստութեամբ կրնան բնակել :

Տարվան վարձու դինը՝ 4000 դուռուչ է . ուզողները՝ Աինեօր Վալօրի փաստաբանին (ալօբութին) հետ կրնան խօսակցիլ , որ Ֆրանկաց թաղը Սօսիլ Լաֆօնթէնին տանը զիմացը կը բնակի :

Յունարէն , գաղղիերէն , ու իտալերէն գիտցող անձ մը՝ իր ծառայութիւնը կը մատուցանէ անուն որ հարկաւորութիւն ունին յիշեալ լեզուներով զի գրել տալու համ թէ սորվելու գանձք :

Ուզողը՝ Յունաց դպրատան գրքատունը կրնա գտնալ գանձիկա :

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ . աս Օրագրու շարքը սնդամ ժը կը տրուի :

Տարեկան ստորագրութեան դինը՝ 120 դուչ է . կանխիկ ո՛վ որ ուզէ կրնայ ստորագրել .

Իզմիր՝ օրագրութեան տպարանը : Լատինաց բժիշկ Պ. Սարգիս Կարապետովին տունը Պօլիս՝ Վեղեր խանը Իզմիրցի Սալախանեան Գալթիա աղային գրատունը :

Ալէքսանդրիա՝ Ազրաղանեան Կարապետ աղային մաղազան :

Թրեսա՝ Լեբլեան Գրիգոր աղային գրատունը : Պուրսա՝ Վապարճեան Սատթէոս ու Գրիգոր աղայից մաղազան :

Լատինաց փախագեան Պօղոս աղային վաճառատունը Լչրղու՝ Յակոբճանեան Աղայ Սարգիս մաղազան Եւա՝ Պըլքըլեան աղայ եղբարց մաղազան :

Պաղտատ՝ Լնգղոյ առաջին թարգման աղայ Խաչիկին տունը :

Լիւցիա՝ Գապազեան աղայ Յարութիւնին մաղազան Պոմպա՝ (շնգկաստան) յարդի պարոնաց Լնգղոյ որդեց և ընկերաց վաճառատունը :

Սիւր Կուզէ կրնայ մասնաւոր բան մը տպել տալ լատին շարքի Մարատեանին մէջ՝ 40 փարայ հատուցանելով ամեն մէկ տողին համար . թէ որ տրուիլու բանը արհեստաւոր համարի՝ օրագրութեան վերատեսուչ :

Սիւր Կուզէ կրնայ մասնաւոր բան մը տպել տալ լատին շարքի Մարատեանին մէջ՝ 40 փարայ հատուցանելով ամեն մէկ տողին համար . թէ որ տրուիլու բանը արհեստաւոր համարի՝ օրագրութեան վերատեսուչ :